

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դրոշի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2008 թվականի նոյեմբերի 26-ի ՀՕ-55-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ հոդվածի 3-րդ մասերում «սանդղանման» բառերը փոխարինել «սանդղաձև» բառերով:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի՝

ա. «վարչապետի» բառը փոխարինել «պետական նախարարի» բառերով,

բ. «վերահսկիչ» բառը փոխարինել «Հաշվեքննիչ» բառով,

գ. «կառավարության աշխատակազմի ղեկավարի» բառերը փոխարինել «Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ-աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի» բառերով.

2) 4-րդ մասի «վարչապետի» բառը փոխարինել «պետական նախարարի» բառերով:

Հոդված 3. Օրենքի վերնագրում, 1-9-րդ հոդվածներում, հավելվածում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	<p align="center">Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</p>
	<p>«Լեռնային Ղարաքաղի Հանրապետության դրոշի մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքում նախատեսվող փոփոխությունները նպատակ ունեն համապատասխանեցնել օրենքը Արցախի Հանրապետության Սահմանադրությանը և Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրերին:</p>
2.	<p align="center">Առաջարկվող կարգավորման բնույթը</p>
	<p>«Լեռնային Ղարաքաղի Հանրապետության դրոշի մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է օրենքի 3-րդ հոդվածում, որը սահմանում է Արցախի Հանրապետության դրոշի գործածումը, «վարչապետի» բառը փոխարինել «պետական նախարարի» բառերով, «վերահսկիչ» բառը փոխարինել «Հաշվեքննիչ» բառով, իսկ «կառավարության աշխատակազմի ղեկավարի» բառերը փոխարինել «Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ-աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի» բառերով: Նախատեսվում է նաև օրենքի տեքստում սանդղանման» բառերը փոխարինել «սանդղած» բառերով:</p> <p>Նախատեսվում է նաև օրենքի ամբողջ տեքստում «Լեռնային Ղարաքաղի Հանրապետություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով:</p>
3.	<p align="center">Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</p>
	<p>Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի կողմից:</p>
4.	<p align="center">Ակնկալվող արդյունքը</p>

<p>Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրհներգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը համապատասխանեցնել Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրերով սահմանված կառավարության կառուցվածքին վերաբերող կարգավորումներին:</p>
--

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ